
**ՕՐԵՆՍՊՐՈԹՅԱՆ ԵՎ ԺՈՒՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ
ՓՈՒՅՐԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

Վ. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Լրագրողի գործունեության արդյունավետության հիմնական նախապայմանը կայուն իրավական դաշտն է, ասել է թե՛ մի կողմից՝ ոլորտը կանոնակարգող օրենքների, մյուս կողմից՝ մասնագիտական էթիկայի կանոնագրերի առկայությունն ու դրանց խստագույնս հետևելու անհրաժեշտությունը:

Միջազգային տարբեր փաստաթղթերում ու տարբեր երկրների լրատվամիջոցների ու գործակալությունների կողմից ընդունված էթիկայի կանոնագրերում ամրագրված էթիկական հիմնական սկզբունքներում կարևորվում է այն հարցը, թե ինչպես, ինչ հիմունքով են ձևավորվում նմանատիպ կարգավորիչները: Լրագրողի աշխատանքը չափազանց բարդ է ու տարաբնույթ, և իր գործունեության ընթացքում նրա և հասարակության մյուս անդամների միջև հարաբերությունները կարող են սրվել, քանզի լրագրողը, լինելով կապող օղակ հասարակության և պետական, իշխանական կառույցների միջև, շատ հաճախ է շոշափում այնպիսի թեմաներ, որոնք կարող են վնասել այս կամ այն պաշտոնյայի կամ քաղաքական գործչի հեղինակությանը, բարի համբավին: Լրագրողը միշտ կանգնած է երկընտրանքի առաջ, այն է՝ լռե՞լ որևէ կարևոր խնդրի մասին՝ չվնասելու համար որևէ մեկի հեղինակությունը, թե՞ լրագրողական ամբիոնն օգտագործել՝ բացահայտելու այս կամ այն երևույթը: Ամեն դեպքում արդյունքը մեկն է՝ խորացող լարվածություն լրագրողի ու հասարակության մյուս անդամների միջև: Հակադիր կողմերի տարաձայնությունները հարթելու փորձն էլ ընկած է լրագրողի մասնագիտական-բարոյական վարքականոնների հիմքում: Ժուռնալիստիկայի զարգացման հետ մեկտեղ օրինաչափորեն ավելանում է այն բնագավառների թիվը, որոնք կարիք ունեն ոչ թե օրենսդրական, այլ էթիկական կարգավորման: Ապացույցը գործող բազմաթիվ փաստաթղթերն են, որոնք մի կողմից կարգավորում են աշխատանքային հարաբերությունները, իսկ մյուս կողմից՝ լրագրողների վարքն ու մասնագիտական պարտականությունները:

Չնայած կանոնագրերի անհրաժեշտությանը՝ ցանկացած երկրում արդյունավետ ժողովրդավարական հասարակություն ձևավորելու համար ձեռնարկվող քայլերից մեկն էլ պետք է լինի ազատ լրատվական միջավայրի ապահովումն ու, հետևաբար, լրատվամիջոցների գործունեությունը համակարգող համապատասխան օրենքների ընդունումը: Սակայն դրանք պետք է լինեն լրագրողական միջավայրի ազատ գործունեությանը նպաստող և ոչ թե խոչընդոտող օրենքներ: Զիչ չեն դեպքերը, երբ լրագրողի մեկնաբանությունը չի համընկել հոդվածի հերոսի տեսակետին: Այս դեպքում տարաձայնություններն իրենց լուծումն են ստանում կա՛ն իրավական հարթությունում, կա՛ն լրագրողը պարզապես ստիպված է լինում հերքում տպագրել՝ ավելորդ գլխացավանքից խուսափելու համար: Կարծում ենք՝ հենց այս դեպքում է, որ անհրաժեշտություն է զգացվում վերանայել մի շարք խախտումների համար լրագրողներին պատասխանատվության կանչելու օրենքով նախատեսված դեպքերը: Ավելին, տեղին կլիներ քննել նախ՝ ժուռնալիստական էթիկայի մի շարք

խախտումների համար նախատեսված օրենքի դրույթների ու էթիկական չափորոշիչների աղերսները:

Օրենքի և ժուռնալիստական էթիկայի տեսանկյունից որպես առաջնային պահանջ անհրաժեշտ է նշել **ստույգ, ճշգրիտ, օբյեկտիվ** տեղեկատվության տրամադրումը, որը տարբեր կանոնագրերի հիմնական սկզբունքներից մեկն է: Պատահական չէ, որ ոլորտի մասնագետների կողմից այդքան շատ է կարևորվում փաստերի նախնական ճշգրտումն ու ստուգումը: Այս պահանջն ամփոփականորեն ենթադրում է **սեղեկատվության ազատության առկայություն**, որն ամրագրված է ինչպես մարդու իրավունքներին առնչվող մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այնպես էլ պաշտպանվում է երկրի գերագույն օրենքով՝ Սահմանադրությամբ, ոլորտին առնչվող համապատասխան օրենքներով: Մեզանում տեղեկատվության ազատությունը նախատեսված է նաև մի շարք օրենքներով, որոնցից են 2003թ. սեպտեմբերի 23-ին ընդունված ՀՀ օրենքը «Չանգվածային լրատվության մասին», ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին»:

Եվրոպայի խորհրդի անդամ դառնալուց հետո Հայաստանը 2001թ. վավերացրեց միջազգային առաջին ընդգրկուն փաստաթուղթը՝ Միավորված ազգերի կազմակերպության կողմից 1948թ. ընդունված «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը»: Եթե օրենքի շրջանակներում քննվում է թե՛ տեղեկատվության տրամադրման ազատության, թե՛ սահմանափակման հարցը («որոնք, սակայն, պետք է սահմանված լինեն օրենքով և անհրաժեշտ լինեն այլ անձանց իրավունքների և հեղինակության հարգման, պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանման համար»), ապա ժուռնալիստական էթիկայի կանոնագրերը չեն թվարկում տեղեկատվության սահմանափակման դեպքերը: Ապացույցը կանոնագրերում այս դրույթի բացակայությունն է, թեև օրենքի և էթիկական կանոնագրերի պահանջները որոշակիորեն նույնանում են հենց տեղեկատվության ազատության չարաշահման հարցում: **Պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիքի հրապարակումը, մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության խախտումը** համարվում են նաև քրեորեն պատժելի արարքներ, հետևաբար կարգավորվում են ՀՀ քր. օրենսգրքի համապատասխանաբար 307-րդ, 144-րդ, 146-րդ հոդվածներով: Ավելին, այս չարաշահումները կարգավորվում են ոչ միայն օրենքով, այլև ժուռնալիստական էթիկայի կանոնագրերով: Մյուս կողմից՝ լրագրողի մասնագիտությունը պահանջում է «ձեռք բերել անհրաժեշտ տեղեկատվությունը, անգամ եթե պետք է դիմել տեղեկատվության հավաքման թույլատրելի ու անթույլատրելի մեթոդների (իհարկե խմբագրության համաձայնությամբ)»²:

Ժուռնալիստական էթիկայի կանոնագրերում կան նաև այնպիսի սկզբունքներ, որոնց խախտման համար, ինչպես և օրենքում, նախատեսվում են պատժամիջոցներ: Պատահական չէ, որ այդ խախտումների համար նախատեսված դրույթներ կան և՛ օրենքում, և՛ լրագրողական էթիկայի մասին տարբեր կանոնագրերում: Եթե օրենքի պարագայում հստակ սահմանվում են պատժամիջոցները, ապա էթիկայի կանոնագրերում կոչ է արվում խուսափել, ավելին՝ բացառել նմանատիպ չարաշահումները: Սա կարելի է բացատրել նրանով, որ և՛ օրենքի, և՛ տարբեր

¹ «Իրավունք, էթիկա և մասնագիտական հմտություններ հետաքննող լրագրողների համար», Եր., 2008, էջ11:

² **Г. Лазутина**, Профессиональная этика журналиста, М., 1999, с. 95.

կանոնագրերի հիմքում ընկած են մարդու իրավունքները, համընդհանուր արժեքները հարգելու պահանջը: Կարծում ենք՝ երկուսի դեպքում էլ ձևակերպումը նույնն է՝ հայտարարություն, որը կարող է նվազեցնել անհատի հեղինակությունը, վարկանիշը հասարակության մեջ: Մի կողմից՝ հասարակական շահերին վերաբերող խնդիրների լուսաբանման գործում գրպարտության և վիրավորանքի համար օրենքով սահմանված դրույթները կարող են կիրառվել լրատվամիջոցներին ու լրագրողներին ճնշելու նպատակով, իսկ մյուս կողմից՝ լրագրողական նպաստավոր պայմաններ ստեղծելու համար պետք է առկա լինի որոշակի պաշտպանվածություն: Որոշ երկրներ այս ուղղությամբ քայլեր արդեն ձեռնարկել են. գրպարտությունը և վիրավորանքը՝ որպես ժուռնալիստական էթիկայի խախտումներ, այլևս քրեորեն պատժելի արարքներ չեն. նման գործերը քննվում են ոչ թե քրեական, այլ քաղաքացիական օրենսգրքով: Այնինչ Հայաստանում դրանք դեռ համարվում են քրեորեն պատժելի արարքներ և համապատասխանաբար կարգավորվում են ՀՀ քրեական օրենսգրքի 135-րդ և 136-րդ հոդվածներով: Այդուամենայնիվ, մասնագետների շրջանում պարբերաբար ծավալվող վեճերի տեղիք է տալիս այն հարցը, թե ճիշտ է արդյոք նմանատիպ խախտումների համար կիրառել իրավական պատժամիջոցներ՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքով, թե՞ նախընտրելի է վերջիններիս համար սահմանվող այլընտրանքային դրույթների ընդունումն ու կիրառումը: Վերջին շրջանում կարծես փորձ է արվում նման բողոքները քննել լրագրողական գործունեությունը ուսումնասիրող Դիտորդ մարմնի շրջանակներում:

Ինչևէ, այն, որ տարբեր կանոնագրերում ամրագրված նույնանման էթիկական չափորոշիչներից յուրաքանչյուրն իր հերթին լրագրողների աշխատանքն ավելի կատարյալ դարձնելու միտում ունի, միանշանակ է: Իսկ հետագայում գրպարտության, վիրավորանքի, պատվի, արժանապատվության ոտնահարման, «մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը խախտելու հայցերի վերաբերյալ վճիռ կայացնելիս իրավական համակարգերը պետք է ձգտեն չափանիշներ սահմանել՝ հասարակական և մասնավոր տեղեկատվությունը միմյանցից տարբերակելու համար»³:

Տեղեկատվության աղբյուրների դաժնությունը մեկն է այն հիմնական սկզբունքներից, որոնք իրապես ամրագրված են թե՛ օրենքում, թե՛ ժուռնալիստական էթիկայի կանոնագրերում ու վարքականոններում: Առաջին հայացքից թվում է, թե օրենքը ևս համահունչ է աղբյուրը չբացահայտելու սկզբունքի պահանջի հետ, բայց իրականում նախատեսում է բացառություններ առանձին դեպքերի համար, այն է՝ «գաղտարանի որոշմամբ՝ քրեական գործի առիթով՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով, եթե հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը, և սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները»⁴: Սակայն շատ լրագրողներ, ելնելով սեփական համոզմունքներից, կարևորում են տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու համար տրված խոստումը և գերադասում են պատասխանատվություն կրել օրենքի առաջ, քան դեմ դուրս գալ սեփական սկզբունքներին: Սակայն մի նկատառում. ժուռնալիստիկայում լայն տարածում գտած անանուն աղբյուրների կիրառումը հենց տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու սկզբունքի արդյունք է, ինչը մի կողմից երաշխիք է

³ «Տեղեկացնելու իրավունք, Չանգվածային լրատվամիջոցների դերը տնտեսական զարգացման գործում», Եր., 2003, էջ 211:

⁴ ՀՀ օրենքը «Չանգվածային լրատվության մասին», Հոդված 5, Եր., 2003:

կարևոր տեղեկատվության ձեռքբերման համար, մյուս կողմից էլ՝ որոշ լրագրողների ու լրատվամիջոցների կողմից անհիմն ասեկոսեներ ու քամբասանքներ տարածելու միտում: Ինչևէ, տուժում է հասարակությունը, որը կանգնում է ապատեղեկատվություն ստանալու մեծ վտանգի առաջ: Այդ իսկ պատճառով որոշ լրատվամիջոցներ խիստ պահանջներ են ներկայացնում իրենց լրագրողներին՝ աղբյուրների հետ կապված: Օրինակ՝ Պրոֆեսիոնալ ժուռնալիստների ընկերության կողմից ընդունված էթիկական նորմերի կանոնագրում ասվում է. «Մինչև տեղեկատվության աղբյուրի անունը չհրապարակել խոստանալը բացահայտեք նրա միտումները: Լիարժեք բացատրե՛ք խոստումը կատարելու ձեր պայմանները՝ տրված տեղեկատվության փոխարեն: Խոստումը պետք է պահել»⁵: Հայաստանում գործող էթիկայի կանոնագրերում նույնպես հատուկ ուշադրություն է դարձվում տեղեկատվության աղբյուրի պաշտպանությանը, որոշակի բացառություններին: Դիտորդ մարմնի վարքականոնի դրույթներից մեկը սահմանում է. «Հնարավորինս խուսափել տեղեկատվության կոնֆիդենցիալ աղբյուրներ օգտագործելուց, լրատվության աղբյուրը գաղտնի պահելու խոստումից առաջ միշտ պարզել շարժառիթները, սակայն եթե տեղեկությունն այնուամենայնիվ տրվում է աղբյուրի գաղտնիության պայմանով, որևէ պարագայում չբացահայտել այն»⁶:

Ժուռնալիստական պրակտիկայում երբեմն օրենքի և էթիկական կանոնագրերի աղերսները չեն համընկնում: Խոսքը գոյություն ունեցող **փոխհարաբերությունների** մասին է: Օրինակ՝ տարբեր կանոնագրեր հատուկ կետ են սահմանում **լրագրող-նորձրնկեր** փոխհարաբերությունների մասին, ինչն, անշուշտ, մասնագիտության և ոչ թե օրենքի պահանջ է: Հաջորդը **սեղեկատվության ձեռքբերման անազնիվ մեթոդների կիրառումն է**: Եթե օրենքը կտրուկ մերժում է նման մեթոդների օգտագործումը, և այն համարվում է քրեորեն պատժելի արարք, ապա ժուռնալիստական էթիկայի տեսանկյունից տեղեկատվության անազնիվ մեթոդների կիրառումը կարող է արդարացված լինել այնքանով, որքանով օգնում է հասարակության շահերին առնչվող կարևոր տեղեկությունների ձեռքբերմանը: Օրենքը մերժում է մարդու անձնական կյանք ներխուժելը, գաղտնի ձայնագրելն ու լուսանկարելը, հեռախոսային, նամակագրական, ընտանեկան տեղեկատվություն ձեռք բերելն ու հրապարակելը: Իսկ էթիկան որոշ դեպքերում (հասարակական շահերից ելնելով) թույլատրում է այդ ճանապարհով ստացված տեղեկատվության օգտագործումը: Չնայած ժուռնալիստական կանոնագրերում ևս կարելի է հանդիպել այսպիսի ձևակերպումների. «*Խուսափել տեղեկությունների ձեռքբերման ծածուկ և գաղտնի մեթոդներից, բացառությամբ այն դեպքերի, երբ ավանդական բաց մեթոդները չեն ապահովում հասարակական շահերից բխող տեղեկությունների ստացումը: Այսպիսի մեթոդների կիրառման անհրաժեշտությունը պետք է բացատրվի բուն հրապարակման մեջ*»⁷: Մյուս կողմից կան հարցեր, որոնք օրենքով և էթիկայով թույլատրելի չեն. նվեր վերցնելը, անվճար հյուրասիրություն ընդունելը, անգամ մեկ գավաթ սուրճը: «Յու էս էյ Թըդեյ»-ի էթիկայի կանոնագիրը «նվերներ» դրույթի տակ սահմանում է. «Մենք չենք ընդունում նվերի գաղափարը: 25 դոլարից ավելի արժույթյան հյուրասիրությունը պետք է անմիջապես վերադարձվի մի երկտողով՝ բացատրությամբ, թե ինչու այն չէք կարող ընդունել... եթե ներկայացման, ճաշկերույթի, սպորտային և այլ իրադարձությունների համար մամուլն ունի հատուկ տեղեր,

⁵ www.spj.org.

⁶ «Դիտորդ մարմնի վարքականոն», Եր., 2007, մարտի 10:

⁷ Նույն տեղում, Սկզբունք 2.3:

անվճար մասնակցությունը թույլատրելի է: Սակայն անձնական օգտագործման համար անվճար տոմսերը ընդունելի չեն»⁸: Էթիկայի տեսանկյունից այս արգելքը ենթադրում է որևէ մեկի հանդեպ պարտավորվածության բացառում: Նվերներ ընդունելու հարցը ևս իրավագիտության մեջ մնում է վիճարկելի: Որոշ քրեագետների կարծիքով «նվեր ընդունելը հավասարագոր է կաշառքի»⁹, իսկ մյուսներն էլ պնդում են, որ այս դեպքում «ամենևին կաշառքի հանցակազմ չկա»¹⁰, երրորդներն էլ չեն բացառում, որ «այդպիսի ընդհանուր բարեհաճ վերաբերմունքը, այնուամենայնիվ, ենթադրում է կաշառք տվողի օգտին ապագայում կոնկրետ արարքի կատարում»¹¹: Եթե ընդունենք, որ նվեր տալը կամ ստանալը, այնուամենայնիվ, կաշառքի տարբեր ձևեր են, ապա դրանց համար համապատասխան պատժամիջոցներ կան՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածով:

Այսպիսով, թե՛ էթիկայի տարբեր կանոնագրերը, թե՛ օրենսդրական դրույթները երկրում իսկական ժողովրդավարական հարաբերությունների ձևավորման ու քաղաքացիական հասարակության կայացման համար կարևոր նախապայմաններ են: Ավելին, գործուն էթիկական սկզբունքներն ու ձևանմուշները, գիտակցությունն ու համապատասխան կրթությունը, խմբագրական ազատությունն այն հիմնական լծակներն են, որոնցով լրատվամիջոցները կարող են ազատ, անկախ ու վստահելի դառնալ: Դրանք ավելի կարևոր են, քան այն օրենքները, որ նախատեսված են սահմանելու լրագրողների պատասխանատու վարքն ու կանոնները:

В. Г. ПЕТРОСЯН - К вопросу об отношении между законодательством и журналистской этикой. - Проблема рассматривается в статье с обращением к опыту Армении. Рассматриваются случаи, которые регулируются только законодательством, а журналистская этика не позволяет обращения к ним, и наоборот. Рассматриваются и те случаи, когда законодательство и журналистская этика используют те же санкции.

⁸ «Профессиональная этика журналиста», Фонд защиты гласности, М., 2002, с. 153.

⁹ «ՀՀ քրեական իրավունք, Հատուկ մաս», դասագիրք բուհերի համար, 2-րդ հրատարակություն, Եր., 2006, էջ 801:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում: